Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 28.12.2023 թվականի «2024 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 334-Ն որոշմանը կից 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2024 թվականի համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում փոփոխությունը պայմանավորված է հետևյալ առաջնահերթություններին լուծում տալու անհրաժեշտությամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մարտի 14-ի թիվ 384-Լ որոշմամբ իրականացված «Բուսաբուծության աջակցության» ծրագրի, համայնքը ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունից ստացել է 1 259 216 դրամ աջակցություն գարնանացան առվույտի ցանքի ծրագրի իրականացմանն աջակցելու համար, որն անհրաժեշտ է ներառել բյուջեի եկամտային մասում՝ որպես այլ եկամուտ և ծախսային մասում նախատեսել որպես ընթացիկ դրամաշնորհ՝ փոխհատուցելու փաստացի կատարված ցանքի դիմաց:

Մասիսի համայնքապետարանի և ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության ջրային ռեսուրսների կառավարման բարելավում ծրագրի շրջանակներում նախատեսվում է Դաշտավան բնակավայրում դրենաժների հատման վայրում կառուցել պոմպակայան, որով դրենաժային ջրերը հնարավոր լինի մղել կիսախողովակների մեջ և ոռոգումն իրականացնել դրենաժային ջրերով: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 60 000 ԱՄՆ դոլար, որի 60%-ը ֆինանսավորվելու է գործակալության կողմից, 40%-ը համայնքի: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 10 000,0 հազար դրամ:

Մասիս համայնքում սուբվենցիոն ծրագրով կառուցված՝ համայնքի սեփականություն հանդիսացող գազատար խողովակներն անհրաժեշտ է չափագրել, որի համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 4 945,8 հազար դրամ:

Համայնքում սուբվենցիոն ծրագրով ասֆալտապատման աշխատանքների իրականացման ընթացքում լրացուցիչ աշխատանքների անհրաժեշտություն է առաջացել, որն էլ պայմանավորված է ծավալաթերթ նախահաշվում կատարված փոփոխությամբ: Ելնելով անհրաժեշտությունից և ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրության կարգավորումներով, լրացուցիչ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 22 012,8 հազար դրամ:

Սուբվենցիոն ծրագրով համայնքում իրականացվող բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ծավալաթերթ նախահաշիվները հաստատվել են նոր խմբագրությամբ, ուստի անհրաժեշտ է տարբերության չափով՝ 11 500,0 հազար դրամ գումար նախատեսել բյուջեում:

Նոր Խարբերդ բնակավայրի մշակույթի տան բեմի, սանհանգույցների և դահլիճի մասնակի վերանորոգման համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 250,0 հազար դրամ՝ նախագծանախահաշվային աշխատանքների ձեռք բերման համար:

Մասիս քաղաքի գեղարվեստի դպրոցի մուտքի աստիճանների և նախամուտքի կառուցման համար անհրաժեշտ է ձեռք բերել նախագծանախահաշվային աշխատանքներ, որի համար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել 880,0 հազար դրամ:

2025 թվականի համար նախնական հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրերը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է ձեռք բերել հետևյալ նախագծանախահաշվային աշխատանքները"

- Մասիս համայնքի փողոցների ասֆալտապատման նախագծանախահաշվային աշխատանքներ և քաղաքաշինական պարզ փորձաքննություն 13 775,0 հազար դրամ

- Մասիս համայնքի արտաքին լուսավորության համակարգի կառուցման նախագծանախահաշվային աշխատանքներ և քաղաքաշինական պարզ փորձաքննություն 6 409,0 հազար դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների								
							Հազար դրամ	
հ/հ	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հոդված*	*Վարչական մասի Եկամուտներ*	*Վարչական մասի Ծախսեր*	*Ֆոնդային մասի Ծախսեր*
				Եկամուտներ				
1				**Այլ եկամուտներ**		1259,216		
				Ծախսեր				
2	**01**	**6**	**1**	**Ընդհանուր բնույթի հասարակային ծառայություններ.** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239		-4945,8	
3				Վարչական սարքավորումներ	5122			-64826,8
4	**04**	**2**	**1**	**Գյուղատնտեսություն.** Այլ ընթացիկ դրամաշնորհ	4639		1259,216	
5	**04**	**2**	**4**	**Ոռոգում.** Մասիս համայնքի Դաշտավան բնակավայրի դրենաժային համակարգից սնվող ոռոգման պոմպակայանի կառուցման աշխատանքներ	5112			7500,0
6				Մասիս համայնքի Դաշտավան բնակավայրի դրենաժային համակարգից սնվող ոռոգման պոմպակայանի կառուցման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134			2500,0

7	04	3	2	**Նավթամթերք և բնական գազ.** Չափագրման մասնագիտական ծառայություններ	4241		-4945,8	
8	04	5	1	**Ճանապարհային տրանսպորտ.** Մասիս համայնքում փողոցների ասֆալտապատման աշխատանքներ	5113			22012,8
9				Մասիս համայնքում ճանապարհների ասֆալտապատման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134			13300,0
10				փորձաքննություն	5134			475,0
11	06	1	1	**Բնակարանային շինարարություն.** Մասիս համայնքում բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	5113			11500,0
12	06	4	1	**Փողոցների լուսավորում.** Մասիս համայնքում արտաքին լուսավորման համակարգի կառուցման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134			5880,0
13				փորձաքննություն	5134			529,0
14	08	2	3	**Մշակույթի տներ.** Նոր Խարբերդ բնակավայրի մշակույթի տան մասնակի վերանորոգման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134			250,0
15	09	5	1	**Արտադպրոցական դաստիարակություն.** Մասիս համայնքի գեղարվեստի դպրոցի նախամուտքի կառուցման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134			800,0
				փորձաքննություն	5134			80,0
						1259,216	***1259,216***	***0,0***
				Ընդամենը				

Բյուջեի փոփոխությունների արդյունքում վարչական մասի եկամուտները և ծախսերը կավելանան 1 259 216 դրամով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ե. ՀԱԿՈԲՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ